

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«09» հոկտեմբեր 2019թ. թիվ

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2019թ. հոկտեմբերի 9-ի նիստի թիվ _____ արձանագրությունը՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի՝ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հատուցման գումարների վճարման կարգը հաստատելու վերաբերյալ» որոշմամբ հաստատված՝ Հատուցման գումարների վճարման կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

Կարգի 3.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3.1. Եթե հատուցման գումարն ենթակա է վճարման այն հիմքով, որ տվյալ Զինծառայողը ճանաչվել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ,

ապա այդ զինծառայողին՝ որպես սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված առաջին վճարում, վճարվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից տրամադրված՝ զինծառայողին հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտի քաղվածքի հիման վրա, որի «Փորձաքննությունը կատարվել է» տողում նշված առաջին ամսաթիվը հաշմանդամություն սահմանելու օրն է: Ընդ որում զինծառայողին վճարվում է հաշմանդամության սահմանման օրվանից մինչև Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման մարմնի կողմից հատուցման գումարը փոխանցելու մասին որոշում կայացնելու օրն ընկած ժամանակահատվածի բոլոր ամիսների համար նախատեսված հավասարաչափ վճարումների ամբողջ գումարը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Ձինծառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝**

Դավիթ Տոնոյան